

Հայկական կապերտներուն մեծագոյն մասը կը գործուին Շիր-վանի եւ Շամախի մէջ: Այստեղերը շինուած կապերտները թէ՛ զեղեցիկ եւ թէ՛ շատ զիմացկուն ու յարզի են: Թէ՛ Շիրվան եւ թէ՛ Շամախ կովկասեան Հայաստան ըլլալով՝ այս կապերտները հայկական կրնանք կոչել, թող որ կապերտներուն զծագրութիւններն ալ իրենց ամէն մանրամասնութեամբ այդ կը հաստատեն: Շամախի կապերտներուն կը տրուի Սումաք անուանաձեւը, որ պարզապէս Շամախի ազաւարմն է:

Փալով գորգերուն՝ չենք զիտեր թէ ե՞րբ եւ ո՞ւր շինուեցաւ առաջին գորգը: Գորգը որ պարզապէս խաւար կապերտն է, մինչեւ մեր օրերը եւ նոյնիսկ մեքենական կերպով զեռ կ'արտադրուի, թէեւ մեքենական խաւար գորգերը երեւութապէս միայն կը նմանին ձեռքով հիւսուած կամ կապուած խաւար գորգերուն:

Խաւար գորգերուն մասին, նոյնիսկ Քրիստոսէ երկու հազար տարի առաջ գրուած Վետայի երգերուն մէջ կը հանդիպինք.

Օն անդր, կ'ազաղակէ Վետայի երգիչը
 Երգէ՛ Վարունայի երգ մը փտոարանական,
 Երգ մը՝ սրտիդ խորքէն տիեզերահամբաւ իշխողին,
 Որ երկիրս տարածած է նման մորթի մը զոր մսագործը
 Կը տարածէ կամ իրբեւ գորգ մը արեգական համար:

Ասորական քանդակ մը Սաղմանասար երկրորդի, Քրիստոսէ 750 տարի առաջ, կը ներկայացնէ զերիներ, որոնք ձոզէ մը կախուած ծոպաւոր գորգ մը կամ կապերտ մը կը տանին, հաւանաբար աւար մը: Ինծի կը պակսի աւելի տեղեկութիւն զերիներու ինքնութեան կամ աւարին ուրիշ բերուած ըլլալուն մասին:

Սըր Մ. Օրէլ Սդէյն Քրիստոսի 330 թուականի լքուած Լոր-նորի անապատին մէջ գտնուող աւերակ քաղաքի մը հնախուզական պեղումներու միջոցին գտաւ «երկու ծուէններ լաւ հիւսուած խաւար կապերտի մը կամ գորգի մը, բուրգէ շինուած: Ուր որ շատ մաշած չէր (գորգը) պահած էր իր գոյները, զանազան աստիճանի թխալոյն հարուստ գինեղոյն երանդ մը, կաշեղոյն, եւ պայծառ կապոյտ, նշանակելի թարմութեամբ: Արհեստը յարմարցնելով ուղղահայեաց եւ խաչաձեւ թելերուն եւ խաւին, մօտիկ նմանութիւն մը ունի արդի ճարտանական աժան գորգերուն»⁽³⁾:

Գորգերուն զծածեւերը ինքնին ապացոյցներ են որ առոնք ծագած են քրիստոնէութենէ ընդմաթիւ դարեր առաջ: Անընդունելի է որեւէ փորձ խաւար գորգերուն բնափայր Քալիքալան նկատելու,

(3) Special Loan Exhibition of Carpets and Other Textiles from Asia Minor, 1929, Pennsylvania Museum and School of Industrial Art. Philadelphia, Carpets, Introduction by Hamilton Bell, p. 5.